

## Կարծիք

Նարինե Անդրանիկի Բուկուշյանի «Բանավոր թարգմանության ուսուցման լեզվամեթոդական համակարգ (կոմպետենտային մոտեցման հիման վրա)» խորագրով ԺԳ. 00.02 « Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» / անգլերեն լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեման արդիական է բազմալեզու բանավոր թարգմանիչներ պատրաստելու անհրաժեշտության տեսանկյունից: 1991թ. ՍՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանի համար ստեղծված անբարենպաստ պայմաններն առաջ բերեցին ինքնուրույն լուծելու և բարելավելու իր ներքին և արտաքին քաղաքական ու տնտեսական խնդիրները, փորձելու գտնել ուղիներ նորովի կառուցելու իր հարաբերություններն այլ երկրների հետ: Միջազգային հարաբերությունների զարգացումը ենթադրում է Հայաստանի Հանրապետության մասնակցությունը տարբեր միջազգային միջոցառումների՝ ինչպիսիք են պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումներ, ժողովներ, կլոր սեղաններ, գագաթաժողովներ, սեմինարներ, հեռուստական օրացրերի ու նախագծերի քննարկում և կազմում: Շնորհիվ ինտեգրացիոն գործընթացների, երկրների տնտեսական ու քաղաքական մերձեցման նման միջոցառումների անցկացման քանակը մեծանում է տարեց-տարի, որն իր հերթին ենթադրում է տարբեր լեզուներով խոսող ու տարբեր մշակույթ ունեցող մարդկանց հաղորդակցություն: Խնդրի լուծումը թարգմանիչներ պատրաստելն է , որը կօգնի հաղթահարել լեզվական արգելքը և կնպաստի մասնակիցների միջև փոխըմբռնման մթնոլորտի ստեղծմանը:

2005 թ. մեր երկրում իրականացվում է բուհական ու հետբուհական համակարգերում բարեփոխումներ և կրթական նոր ստանդարտների հիման վրա վերակառուցվում են կրթական ծրագրերն ու պլանները:

Աշխատանքի ներածական մասում հստակորեն ձևակերպված է հետազոտության նպատակը, գիտական վարկածը, օբյեկտը, առարկան, առաջադիր խնդիրները և պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Առաջին «եռալեզու ուսանող-բակավրերի բանավոր թարգմանական գործունեության ուսուցման տեսական հիմքերը «Թարգմանչական գործ» /ռուսերեն, անգլերեն, հայերեն լեզուներ/ ծրագրի շրջանակներում» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Ատենախոսը հանգամանալից նկարագրել է հաջորդական բանավոր թարգմանության առանձնահատկությունները, հիմնավորել է բազմալեզու բանավոր

թարգմանիչներ պատրաստելու անհրաժեշտությունը, հստակորեն վերլուծել է ժամանակակից պահանջներն ու առաջավոր փորձը, տվել է եռալեզու «Թարգմանչական գործ /ռուսերեն, անգլերեն, հայերեն ծրագրով բակալավրատի ուսանողներին ուսուցանելու առանձնահատկությունները:

Առաջին գլխի առաջին «Բանավոր հաջորդական թարգմանությունը որպես թարգմանչի մասնագիտական գործունեության տեսակ» ենթագլխում ատենախոսը քննության է առնում բանավոր թարգմանության տեսակները, բանավոր թարգմանչի գործողությունները հաջորդական թարգմանության ժամանակ: Նա ներկայացրել է հաջորդական թարգմանության փուլերը համապատասխան ընթացակարգերով:

Առաջին գլխի երկրորդ «Բանավոր թարգմանչին առաջադրվող ժամանակակից պահանջները բազմալեզվության համատեքստում» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է բանավոր թարգմանիչների պատրաստման առաջավոր փորձը լեզվաբանական, հանրալեզվաբանական, գործաբանական, խոսութային և այլ կոմպետենցիաների ձևավորման տեսնակյունից:

Առաջին գլխի երրորդ «Թարգմանչական գործ (ռուսերեն, անգլերեն, հայերեն լեզուներ)» ենթագլխում ատենախոսը վերլուծում է բանավոր թարգմանության դասընթացները լեզվական բուհում:

Երկրորդ «Բանավոր թարգմանության ուսուցման մեթոդաբանական հիմքերը «Թարգմանչական գործ (ռուսերեն, անգլերեն, հայերեն)» բակալավրի ծրագրի շրջանակներում» գլխում, որը կազմված է երեք ենթագլխից, ատենախոսը առաջարկում է բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենտությունը ներկայցնող ձևաչափ – մոդելը, հստակեցրել է մասնագիտական պատրաստմանն ուղղված կոմպետենտային մոտեցման պահանջները, վերլուծել է եռալեզու ուսանող-թարգմանիչների լեզվական պատրաստվածությանն առնչվող առանձնահատկությունները բակալավրիատի «Թարգմանչական գործ /ռուսերեն/անգլերեն/հայերեն» ծրագրի սահմաններում: Ընդհանուր առմամբ, նա քննության է առնում երեք լեզվի՝ ռուսերենի, անգլերենի, հայերենի փոխաներթափանցման ազդեցության հիմնախնդիրը: Ատենախոսը հանգամանակից նկարագրում է հիմնախնդիրը և նշում, որ բազմալեզվությունը բնականորեն հանգեցնում է փոխներթափանցման:

Երկրորդ գլխի առաջին «Բանավոր եռալեզու թարգմանչի մասնագիտական կոմպետենտության մասնագիտական մոդելը և նրա ձևավորման մեթոդիկան» ենթագլխում ատենախոսը վերլուծում է արդի փուլում հայտնի, իրենց

արդյունավետությունն ապացուցած բանավոր թարգմանության ուսուցման մոդելները տարբեր կոմպետենցիաների տեսնակյուններից:

Երկրորդ գլխի երկրորդ «Կոմպետենտային մոտեցումը որպես բանավոր թարգմանության ուսուցման մեթոդաբանական հիմք» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է կոմպետենտային մոտեցման պահանջները, ուսուցման անհատական, խմբային, ֆրոնտալ ձևերը, ուսուցման փոխներգործուն և ավանդական մեթոդները, ինչպես նաև գնահատման և ինքնագնահատման ձևերը:

Երկրորդ գլխի երրորդ «Թարգմանչական բաժնի եռալեզու ուսանող-բակալավրերի լեզվական պատրաստման յուրահատկությունը եռալեզու բանավոր թարգմանչի մասնագիտական կոմպետենտության ձևավորման և զարգացման գործընթացում» ատենախոսը ուսումնասիրում է ռուսերեն, անգլերեն և հայերեն լեզուների փոխներթափանցման դրսևորումները բանավոր թարգմանության ուսուցման գործընթացում:

Երկրորդ գլխին ու ենթագլուխներին հետևում է համապատասխան եզրահանգումները:

Երրորդ գլխի «Բանավոր հաջորդական թարգմանության ուսուցման մեթոդիկայի փորձարարական ստուգումը «Թարգմանչական գործ (ռուսերեն, անգլերեն, հայերեն)» բակալավրի ծրագրի շրջանակներում» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից, որտեղ ատենախոսը քննարկում է արդեն իսկ ատենախոսության շրջանակներում կազմված փորձարարական ուսուցման և լեզվամեթոդական համակարգի միջոցով եռալեզու բանավոր հաջորդական թարգմանչական համակարգի ուսուցման ընթացքն ու արդյունքները: Նրան հաջողվում է հաստատել, որ այն թեզը, ըստ որի՝ մշակված լեզվամեթոդական համակարգն ուղղված եռալեզու բանավոր հաջորդական թարգմանության ուսուցմանը և կարելի է ներառել թարգմանչական բաժնում եռալեզու բակալավր ուսանողներ պատրաստելու դասընթացում:

Երրորդ գլխի առաջին «Թարգմանչական բաժնի եռալեզու ուսանող-բակալավրերի բանավոր հաջորդական թարգմանության ուսուցման լեզվամեթոդական համակարգի կառուցվածքը» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է իր կողմից մշակված լեզվամեթոդական համակարգը, ինչպես նաև թարգմանության ուսուցման վարժությունների տեսակները:

Երրորդ գլխի «Մանկավարժական գիտափորձի հաստատող փուլի ընթացքը և արդյունքերը» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է փորձարարական ուսուցման ընթացքը և արդյունքները:

Գնահատելով Նարինե Բուկուճյանի իրականացրած հետազոտության ընթացքն ու արդյունքները, կարելի է առանձանցնել որոշ նկատառումներ.

1. Դժվար է հասկանալ, թե ատենախոսը ինչ նկատի ունի, երբ գրում է «постоянно», будет влиять на русский язык, который используется «довольно часто», и английский язык, который используется «иногда»». Կարծում ենք շարադրանքը գիտական չէ:

2. Հասկանալի չէ, թե ինչպես են տարիքային առանձնահատկությունները նվազեցնում փոխներթափանցման հետևանքները:

3. Խոսելով ուսուցանվող լեզվի բացասական ազդեցության մասին, ատենախոսը չի հիշատակում նաև դրական փոխազդեցության կամ տրանսպոզիցիայի մասին:

4. Երբ քննության է առնվում երեք լեզվի փոխներթափանցման հիմնախնդիրը, ապա միայն երկու լեզվի բացասական ազդեցության մասին խոսելը ճիշտ չէ: Следовательно, от преподавателей устного перевода требуется больше усилий по направлению снижения степени отрицательного влияния со стороны армянского и русского языков в процессе овладения английским языком.

5. Հասկանալի չէ, թե լեզուների ընտրությունը և ապաընտրությունը / активация механизма селекции и деселекции языков/ ինչպես է կանխարգելում փոխներթափանցումը:

6. Ատենախոսը հստակեցնում է մանկավարժական գիտափորձի փուլերը: Հարց է առաջանում, եթե գիտափորձը մանկավարժական է, ապա ինչպես է հիմնավորվում առաջարկվող մեթոդական համակարգը:

Գրախոսվող ատենախոսության հետազոտության թեման չափազանց արդիական է, գիտական նորույթ, տեսական, գործնական նշանակությունը, ինչպես նաև ստացված տվյալների արդյունքների հավաստիությունը, եզրակացությունների հիմնավորվածությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Նարինե Անդրանիկի Բուկուճյանի «Բանավոր թարգմանության ուսուցման լեզվամեթոդական համակարգ (կոմպետենտային մոտեցման հիման վրա)» խորագրով թեկնածուական ատենախոսությունն արդիական է, ունի գիտական նորույթ, տեսական և գործնական նշանակություն, բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն

լեզու) մասնագիտության թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած  
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս  
մանկավարժական գիտությունների  
թեկնածու



Շ. Գրիգորյան

Հաստատում եմ ԵՊՀ-ի գիտ. քարտուղար



Լևոն Հովսեփյան

Պատմական գիտությունների թեկնածու

16. 06. 2021թ.